Համաձայնագիր-3
16.02.2021թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/001/5 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան

«03» փետրվարի 2022թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «Վարդգես Պապյան» Ա/Ձ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Վ. Պապյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ ու 4-րդ ենթակետերով, և հիմք ընդունելով 16.02.2021թ. կնքված N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/001/5 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 7-րդ, 9-րդ և 12-րդ չափաբաժինների գները ավելացնել համապատասխանաբար 325 800, 302 400 և 571 176 ՀՀ դրամով, իսկ ծառայության մատուցման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:

1.2. Պայմանագրի 4.1 կետով նախատեսված Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը ավելացնել 1 199 376 ՀՀ դրամով, այն սահմանելով 11 194 176 (տասնմեկ միլիոն հարյուր իննսունչորս հազար հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ:

1.3. Հաստատել նոր ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույց՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

1.4. Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածվում են կողմերի միջև 2022 թվականի հունվարի 26-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Վարդգես Պապյան» Ա/Ձ
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	ք. Երևան, Արաբկիր,
ՀՎՀՀ 02647057	Վաղարշյան 12, 4-րդ հարկ, 1-ին սեն.
Հ/Հ 900011054013	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի	Հ/Հ 2052832337291001
գործառնական վարչություն	ՀՎՀՀ՝ 28069927
Գլխավոր քարտուղար	Տնօրեն
Է. Գևորգյան _____	Վ. Պապյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/	/ստորագրություն/ Կ.Տ/

Հավելված
Հաստատված է 16.02.2021թ.կնքված N ՊԵԿ-ԳՀԾՁԲ-21/001/5
գնման պայմանագրի « 03» փետրվարի 2022թ. փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ. ՀՀ ՊԵԿ բյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
Շենքերի մաքրման ծառայություն	4239		325800	325800	325800	325800	325800	325800	325800	325800	325800	325800	325800	**325800**
Շենքերի մաքրման ծառայություն	4239		302400	302400	302400	302400	302400	302400	302400	302400	302400	302400	302400	**302400**
Շենքերի մաքրման ծառայություն	4239		571176	571176	571176	571176	571176	571176	571176	571176	571176	571176	571176	**571176**

*Վճարման ժամանակացույցի գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղար

Է. Գևորգյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/

ԿԱՏԱՐՈՂ
«Վարդգես Պապյան» Ա/Ձ
ք. Երևան, Արաբկիր,
Վաղարշյան 12, 4-րդ հարկ, 1-ին սեն.
«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 2052832337291001
ՀՎՀՀ՝ 28069927
Տնօրեն

Վ. Պապյան _____
/ստորագրություն/